

## Արամ Փախչանյան «Այբ» դպրոցի տնօրեն

### *Կենսագրություն*

Ծնվել է 1968 թ. ապրիլի 1-ին Երևանում: Ավարտել է [ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցը](#), ապա՝ [Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը](#) («Ֆիզտեխ»)՝ մոլեկուլային և քիմիական ֆիզիկայի ֆակուլտետը:

1993 թ.-ից աշխատում է «[ABYY](#)» ընկերությունում: 1997 թ.-ից եղել է կորպորատիվ նախագծերի բաժնի տնօրեն, 1999-2004 թթ.՝ կորպորատիվ նախագծերի գծով փոխնախագահ: 2004 թվականից «[ABYY](#)» ընկերության փախնախագահն է, նաև FormReader ծրագրի մենեջերը:

2006 թ. մի խումբ ընկերների հետ հիմնադրել է «Այբ» ակումբը և «Այբ» կրթական հիմնադրամը:

2006-2013 թթ. եղել է «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ:

2014 թ. հուլիսին Արամ Փախչանյանը դադարեցնում է ակտիվ գործունեությունը «[ABYY](#)» ընկերությունում «Այբ» դպրոցը ղեկավարելու համար՝ միաժամանակ մնալով «[ABYY](#)»-ի փոխնախագահի պաշտոնում:

2015 թ. -ից առ այսօր «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Արամ Փախչանյանը նաև [Ռուսական պետական վեճնորային ընկերության](#) (PBK) ներդրումային հանձնաժողովի, [«Գրանատուս» վեճնորային ընկերության](#) խորհրդատուների խորհրդի, «Արար» հիմնադրամի խորհրդի, [TEDxYerevan](#)-ի խորհրդատուների խորհրդի անդամ է:

Ամուսնացած է, ունի 2 երեխա: